ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ԻՐ ԵՎՍ ՄԵԿ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱԿ–ի գլխավոր քարտուղար Բուտրոս Բուտրոս–Ղալի–ի անցած շաբաթ Անդրկովկաս կատարած այցի արդյունքներին է նվիրված «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի նոյեմբերի 8–ի հրապարակումը, որում վերլուծելով գլխավոր քարտուղարի այցելության հետ կապված անդրկովկասյան պետությունների սպասելիքները եւ դրանց օբյեկտիվ իրականացման աստիճանը, հեղինակը խնդիրը լուսաբանում է ոչ միայն պետությունների մակարդակով, այլեւ ներպետական, ներքաղաքական անցուդարձի կտրվածքով:

Ադիբեջանական դիվանագիտությունը, քարոզչական համակարգը չհասավ իր նպատակին, ասվում է հրապարակման մեջ, ՄԱԿ–ի գլխավոր քարտուղարը չցանկացավ հիմնվել տարածքների 20 տոկոսի օկուպացման, 1 միլիոն բռնագաղթածների, խաղաղասեր Ադրբեջանի եւ ագրեսոր Հայաստանի մասին մեր հարեւանների միակողմանի տեղեկատվության վրա, եւ, ի պատիվ իրեն, հավասարակշռությունը մազաչափ անգամ չկորցրեց նույնիսկ այն բանից հետո, երբ սպասելիքներն ի դերեւ ելած ադրբեջանական քարոզչական մեքենան փորձեց «բացը» լրացնել իրեն բնորոշ գործելաոճով:

- Տարակուսանք հայտնելով Հայաստանի որոշ լրատվական միջոցների եւ քաղաքական գործիչների մեկնաբանությունների կապակցությամբ, որոնք հիմնվելով ադրբեջանական կասկածելի աղբյուրների վրա, ՄԱԿ–ի գլխավոր քարտուղարի Հայաստան այցից առաջ արդեն փորձեցին ստեղծել կանխակալ տրամադրվածություն, թերթը դա բացատրում է նրանց կողմից Հայաստանի իշխանությունների հասցեին մեղադրանքներին ու քննադատության հերթական սլաքներն ուղղելու համար համապատասխան հիմք ապահովելու մտադրությամբ:

ԱՐՄԵՆ ՊՐԵՍ